

Հապավումների և համառոտագրությունների կիրառության յուրահատկությունները համացանցային դիսկուրսում

Ս. Գասպարյան, Ն. Մադոյան

Երևանի պետական համալսարան
Corresponding authors. E-mail: sedagasparyan@ysu.am, nmadoyan@ysu.am

Paper received 29.05.21; Accepted for publication 14.06.21.

<https://doi.org/10.31174/SEND-HS2021-253IX45-03>

Բանալի բառեր. համացանցային հաղորդակցություն, լեզվական միջոցներ, հարալեզվական միջոցներ, արտալեզվական միջոցներ, համառոտագրություններ, հապավումներ. Հայտնի է, որ վիրտուալ իրականությունը ձևավորվում է այնպիսի կարևոր գործոնների առկայության դեպքում, ինչպիսիք են սոցիալական, մշակութային, սեռային և այլն: Վերջին. տարիների ուսումնասիրությունները վկայում են, որ լեզվական և հարալեզվական միջոցների բնորոշությունը էապես կարևոր դեր է խաղում հաղորդակցությունն իրականացնող օգտատերերի ճանաչողական մեխանիզմների և հաղորդակցական ռազմավարությունների դրսևորման գործում: Սույն հոդվածի շրջանակներում հեղինակները ուշադրության կենտրոնում են պահում համացանցային համաժամանակյա և տարածամասնակյա հաղորդակցության ընթացքում լայնորեն կիրառվող հապավումների և համառոտագրությունների գործառնության խնդիրները, որոնք սերտորեն առնչվում են վիրտուալ ժամանակի և տարածության տնտեսման կարևոր և արդիական հարցին: Հարատեքստային նկարագրական մեթոդի կիրառումը և հատկապես համատեքստի և հարատեքստի գիտելիքային դաշտի հաշվառումը խոսքի վերլուծության մեջ հնարավորություն է տալիս հեղինակներին շեշտադրելու հապավումների և համառոտագրությունների քանակական և որակական գործառնությունների որոշիչ դերը օգտատերերի տարիքային, սեռային, սոցիալական և այլ յուրահատկությունների բացահայտման մեջ:

Բանալի բառեր. համացանցային հաղորդակցություն, համառոտագրություններ և հապավումներ, հասարակական և մշակութային գործոններ, հարատեքստ, համատեքստ, ժամանակի և տարածության տնտեսում

Ներածություն. Համացանցային հաղորդակցությունը որպես այդպիսին նորույթ չէ և դեռ վաղուց է գրավել ուսումնասիրողների ուշադրությունը, սակայն վերջին տասնամյակում հետաքրքրությունը դրա նկատմամբ մեծացել է, և հաղորդակցության այս տարատեսակին առնչվող բազմաթիվ նոր տեսական մոտեցումներ են ի հայտ եկել, որոնք հիմնականում պայմանավորված են «հաղորդակցություն» հասկացությունը նորովի մեկնաբանելու ձգտումով: Բանն այն է, որ հաղորդակցությունն այլևս չի դիտվում որպես մեկ անձից մյուսին տեղեկատվություն փոխանցելու գործընթաց, քանի որ էլեկտրոնային հաղորդակցության առանձնահատկությունները պարտադրում են հաղորդակցության այլ մոդել, որի շրջանակներում կարծես ինչ-որ չափով անտեսվում է համագործակցային բաղադրիչը և սովորում է մնում ուրուշակի գիտելիքի առկայության անհրաժեշտությունը [5, pp.2-3; 4, p.8]: Մակայն փորձը ցույց է տալիս, որ ցանկացած հաղորդակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է հենքային ընդհանուր գիտելիքով, որի առկայությամբ էլ կարելի է հաղորդակցվողների միջև ապահովել փոխըմբռնում և փոխադարձ ակնկալիքները բավարարելու հնարավորություն [7, pp.81-82; 5, pp.11-12]: Հասկանալի է, որ այստեղ առաջնային նշանակություն է ձեռք բերում համացանցային գրագիտությունը, որը որոշակի իմացություն պահանջող գործոնների ամբողջություն է: Հենց սա է առաջնորդում օգտատերերին որևէ հուզանշան, հապավում, համառոտագրություն կամ այլ նշան կիրառելիս: Այս միավորները հաղորդակցական ակտերին գուզահեռ կարող են որոշիչ լինել անհատի ինքնությունը բացահայտելու հարցում: Այլ կերպ՝ դրանք ոչ միայն լրացնում են

հարալեզվական միջոցների բացը, այլև հանրաբանական արժեք ունեն: Համացանցային դիսկուրսի ժամանակակից աշխարհում աստիճանաբար ավելի լայն թափ ստացող կիրառությամբ պայմանավորված կարևորվում են համացանցային հաղորդակցության լեզվական, հարալեզվական և արտալեզվական գործառնությո կատարող միջոցների քննությունն ու լուսաբանումը: Ու թեև հա-

մացանցային լեզվաբանությամբ զբաղվող մի շարք գիտնականներ

անդրադարձել են սույն հոդվածում արժարժվող տարբեր խնդիրների [1; 3; 6 և այլն], այդուհանդերձ նրանց հետազոտական ուսումնասիրություններում բացակայում է համացանցային դիսկուրսում (մասնավորապես գործարար էլեկտրոնային նամակներում, էլեկտրոնային գրույցներում և մեկնաբանություններում) լեզվական և արտալեզվական գործոնների փոխներթափանցվածության համալիր քննությունը հարալեզվական բնութագրական հատկանիշների հաշվառումով: Հետևաբար՝ այս ուսումնասիրության շրջանակներում մենք նպատակադրվում ենք առավել ամբողջացնելու պատկերացումը համացանցային դիսկուրսի նշված տարատեսակների մասին, քանզի անզվերեն համացանցային հաղորդակցության լեզվական և արտալեզվական գործոնների որոշարկումը՝ հարալեզվական միավորների կիրառության հաշվառումով նոր լույս է սփռում համացանցային դիսկուրսի հաղորդակցական նպատակի

վերհանման խնդիրների վրա և հնարավորություն տալիս նորովի սահմանելու դիսկուրսի այս տեսակը՝ ուշադրություն հրավիրելով բանավոր խոսքին բնորոշ տարրերի գերակայությանը: Սույն հոդվածում մասնավորապես նպատակադրվում ենք քննության առնել համացանցային հապավումների ստեղծման և կիրառման իրողությունը, քանզի դիտարկումները ցույց են տալիս, որ վերջիններս դարձել են համաժամանակյա և տարածամասնակյա հաղորդակցության

տարատեսակների անփոխարինելի բաղադրիչներ: Իհարկե կարելի է նկատել, որ և՛ համառոտագրություններ ու հապավումներ և՛ այլ կարգի նորաբանություններ համացանցային տիրույթում ստեղծվում են նույն ավանդական սկզբունքներով: Կազմության առումով՝ դրանք նոր համարվել չեն կարող, քանի որ անգամ ամենատարօրինակ նորաստեղծ միավորները ձևավորվում և կիրառության մեջ են մտնում արդեն նախկինում սահմանված որոշակի կանոններով [3]:

Հապավումներ և համառոտագրություններ.

Հայտնի է, որ հապավումները նոր երևույթ չեն խոսքում: Դրանք եղել են գրավոր լեզվի անբաժան մաս՝ տեղ գտնելով թե՛ սուպեր, թե՛ ձեռագիր տեքստերում [2, p. 98], սակայն կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ համացանցային հաղորդակցության մեջ գլխավորապես կատարելով ժամանակ և էներգիա խնայելու գործառույթը¹, դրանց կիրառությունն իհարկե կատարում է ևս մեկ՝ հասարակական գործոնով պայմանավորված գործառույթ, այն է՝ օգտատիրոջը որպես համացանցային դիսկուրսի հմուտ լեզվակիր կամ գիտակ ներկայացնելու գործառույթը: Ինչպես առերես հաղորդակցության ժամանակ, այնպես էլ համացանցային դիսկուրսում համառոտագրություններն ու տառային հապավումները գործածվում են՝ մատնանշելու անհատի՝ որևիցե համացանցային խմբին պատկանելը: Հիմնվելով մեր նախորդների ուսումնասիրությունների վրա՝ պարզում ենք, որ համացանցային հաղորդակցության մեջ այնպես, ինչպես առերես շփման պարագայում էական նշանակություն են ձեռք բերում սոցիալական հարաբերությունները, որոնք ձևավորվում են ըստ լեզվում հաստատված որոշակի նորմերի և նպաստում են հաղորդակցվողների մշակութային ինքնության դրսևորմանը: Շեշտադրվում են նաև հաղորդագրությունների հակիրճ լինելու կարևորությունը, հարալեզվական միջոցների բացը լրացնող տեքստային և կեստադրական

միավորների կիրառումը, ուղղագրական նորմերի միտումնավոր խեղաթյուրումները, ինչպես նաև համառոտագրությունների և հապավումների հաճախադեպությունը [9]: Մեր կատարած ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել, որ լեզվական միավորներն ընդհանրապես և հապավումներն ու համառոտագրությունները մասնավորապես, իրոք, կարող են օգտատերերի մասին որոշակի տեղեկատվություն հաղորդել, այդ թվում նաև բացահայտել օգտատիրոջ հաղորդակցական հմտությունը այս դաշտում, հատկապես եթե նա կիրառում է հազվագյուտ հապավումներ կամ համառոտագրություններ:

Մինչև այս խնդիրների քննությանն անդրադառնալով նախ էապես կարևոր է տարբերակել համառոտագրություն և հապավում հասկացությունները: Հայտնի է, որ համառոտագրությունը բառի կրճատ գրության ձև է, երբ հաճախ գործածվող և ծանոթ բառերը, որոշակի կրճատման ենթարկվելով, գրավոր խոսքում

ներկայացվում են համառոտ: Ինչ վերաբերում է հապավմանը, ապա սա հասարակական-տնտեսական կյանքի զարգացմամբ պայմանավորված՝ լեզվի զարգացման այս կամ այն փուլում ձևավորված բառակազմական նոր եղանակ է, որն ըստ էության գրավոր ծագում ունի և հիմնվում է կրճատագրության սկզբունքի վրա: [13]²:

Ինչպես արդեն վերը նշեցինք, համացանցային հաղորդակցության մեջ հապավումների տարածմանը նպաստող գործոնների շարքում կարևոր է օգտատերերի՝ ժամանակը խնայելու ձգտումը, և, իհարկե, դրա իրականացման հարցում էական հանգամանք է զարգացած

նորարարական տեխնոլոգիաների առկայությունը, քանզի հենց դրանց օգնությամբ է, որ

հաղորդակցվողները հնարավորություն են ստանում տարբեր ծրագրերի միջոցով ուղարկելու թե՛ ձայնային և թե՛ կարճ հաղորդագրություններ (հաճախ նաև երկուսը միաժամանակ)³: Այս ոլորտում կատարված վերջին հետազոտությունները փաստում են, որ կարճ հաղորդագրությունները, որոնք հաղորդակցության ոլորտին միջոցներից են, հիմնականում կիրառվում են տարիքային և

մշակութային նույն խումբը ներկայացնող գրուցակիցների կողմից համաժամանակյա տիրույթում, և այդ պարագայում անհրաժեշտ է, որ հաղորդակցվողները հենքային գիտելիք ունենան

կիրառվող համացանցային հապավումների մասին, որպեսզի ի վիճակի լինեն վերծանելու դրանց արտահայտած իմաստը: Ուստի հապավումների և համառոտագրությունների զարգացման

տեմայը մեծապես կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են համացանցային

գրագիտությունը, հենքային գիտելիքը, գրուցակիցների մշակութային պատկանելությունը, նրանց տարիքային խումբը և այլն:

Համառոտագրությունների և հապավումների ծագումնաբանությանը վերաբերող

հիմնախնդիրների քննությունից պարզ է դառնում, որ հապավումներն առաջացել են

համառոտագրություններից: Համացանցային լեզվաբանության շրջանակներում կատարված

¹ Հետաքրքրական է, որ հապավման բառակազմական սկզբունքը հայերենում առանձնապես լայն տարածում է ստացել հետհեղափոխական սովետական ժամանակահատվածում, թեև դրա համար հիմք են ծառայել հայերենի հնամյա համառոտագրությունները, որոնք գլխավորապես կիրառվում էին մագաղաթի կամ թղթի խնայման նպատակով: Տե՛ս [14]: Արևմտյան գրավոր ավանդույթում հապավումների կիրառությունը նույնպես մեծ վաղեմություն ունեցող երևույթ է, և այստեղ նույնպես դրանց լայն գործածությունը առնչվում է տարածության և ժամանակի խնայման խնդրին: Տառային հապավումները միանգամայն ընդունելի են համարվել թե՛ Հունաստանում և թե՛ Հռոմում, հատկապես որ քարերի վրա կատարվող արձանագրությունների դեպքում տարածություն խնայելու հարցը առաջնախնդիրներից էր [8]: Նույն նպատակին հետամուտ, երբեմն նաև գրվածի գաղտնիությունն ապահովելու նկատառումներով՝ Հին Անգլերենում նույնպես հակված էին տեղ սպա հապավումներին: Հին անգլերեն գրված *Beowulf* անգլոսաքսոնական էպիկական պոեմում բազմաթիվ են հապավումների կիրառությունները:

² Հայերենում տարբերակում են հապավումների երեք տիպ. տառային (երբ կազմվում են բառերի առաջին տառերի համադրմամբ), վանկային (երբ համադրվում են բառերի այս կամ այն վանկերը) և խառը (երբ բառի կամ վանկի հետ միասին կարող է գործածվել նաև տառային հապավում):

³ Դիտարկումները ցույց են տալիս, որ տարբեր գործողություններով զբաղված հաղորդակցվողները (օրինակ՝ հեռուստացույց դիտող, դասախոսություն լսող կամ ճամփորդող) իրենց հաղորդակցական պահանջմունքը հաճախ բավարարում են կարճ հաղորդագրությունների միջոցով (Hortstamanshof and Power 2005): Ուստի չի կարելի թերագնահատել կարճ հաղորդագրությունների դերը համացանցային լեզվի

ձևավորման մեջ: Դրանց կարևոր յուրահատկություններից է, օրինակ, գրանշանների սահմանափակումը (160 նիշ), որի պատճառով գրուցակիցները հաճախ դիմում են հապավումների և համառոտագրությունների օգնությանը և ժամանակի ընթացքում ստեղծում նաև նորերը: Կարճ հաղորդագրությունների սեղմ, խտացված ձևաչափը և սահմանափակ գրանշանները պետք համապատասխանեցված լինեն

հապավումների և համառոտագրությունների կիրառության նորմերին: Ուստի հիմնվելով փորձի և ցանցային տեղեկատվության յուրահատկության վրա՝ հաղորդակցվողները փորձում են միատարրություն ստեղծել, որն էլ բերում է կարճ հաղորդագրությունների գործածության:

ուսումնասիրությունները բացահայտում են այս լեզվական միավորների միջև եղած

տարբերությունները, ինչն էլ, իհարկե, պայմանավորված է համացանցային դիսկուրսի ի հայտ գալու գործոնով: Մի շարք համացանցային բառարանների ստեղծումը դրական խթան դարձավ

համացանցային տիրույթում կիրառվող հապավումների և համառոտագրությունների քննությունը մեթոդաբանական առումով առավել հիմնավոր իրականացնելու համար:

Համառոտագրությունների ու հապավումների այնպիսի գլխավոր տարբերությունների

բացահայտումը, ինչպիսիք են լեզվական միավորների և դրանց բաղադրիչների ընտրությունը,

բառակապակցությունների կրճատումը և այլն, հնարավորություն տվեց մեթոդաբանական

առումով ճիշտ հիմքերի վրա դնել դրանց քննության խնդիրները [12]: Ուսումնասիրությունները պարզում են, որ տերմիններից, հատուկ և հասարակ անուններից բացի՝ կարող են

համառոտագրվել նաև առանձին բառեր: Ինչպես գիտենք, համառոտագրությունները

կարդացվում են որպես ամբողջական միավորներ, մինչդեռ հապավումները ներկայացվում են որպես բառակազմական նոր մոտեցումներով ձևավորված հատուկ տիպի բաղադրյալ միավորներ, որոնց կազմության հիմքում, իհարկե, նորից կրճատումն է:

Համացանցային լեզվաբանության շրջանակներում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ առցանց հաղորդակցության ընթացքում շատ մեծ է հապավումների և համառոտագրությունների դերը լեզվական նոր համակցությունների ձևավորման գործում, ընդ որում դրանք ստեղծվում են բառերի կրճատման ամենատարբեր ձևերի կիրառմամբ

(սկզբնամասի, միջնամասի և վերջնամասի կրճատումներ կամ նույնիսկ դրանց համակցված կիրառություն): Բերենք մի քանի օրինակ՝

1. սկզբնամասի կրճատում՝ *u (you), ur(you are կամ your),*

@goki, hahahaha u got that right cause that where we @AsianGirl1987, came so like the other 17 names u use but u will freeze to death br

2. միջնամասի կրճատում՝ *Silence for two min plz (please)*

Ինչպես տեսնում ենք բերված ասույթում առկա է թե՛ միջնամասի և թե՛ վերջնամասի կրճատում:

3. վերջնամասի կրճատում՝ *sheetmetalmán: its going bro, be prepared for the new room, its called tardville4:46:am*

Հայտնի է, որ հատկապես վերջնամասի կրճատումը լայն տարածում ունի նույնիսկ առերես հաղորդակցություն իրականացնելիս, իսկ քերականական կրճատման դաշտում համացանցային հաղորդակցության մեր քննությամբ բացահայտվել է քերականական կրճատման նոր ձև, որը, կարելի է ասել, գրեթե գոյություն չունի գրական անգլերենի տարատեսակներից որևիցե մեկում.

y'all niggas fake y'all was just saying NBA Youngboy was involved in this indecent.... WHAT?

Բերված նմուշի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է բառի վերջնամասի կրճատում

սպաթարցի միջոցով, որը կարելի է նոր երևույթ համարել քերականական հնարավոր

կրճատումների մեջ:

Տարբեր ուսումնասիրություններում արդեն եղել են անդրադարձներ այն մասին, որ ընդհանուր առմամբ՝ հապավման իրականացում գործառույթը մեծ չափով կախված է հաղորդակցության իրադրային նպատակից, ընդ որում թե՛ գրավոր և թե՛ բանավոր դիսկուրսում [10; 11; 13], և այս կամ այն կրճատմամբ ստեղծված լեզվական նոր միավորը հաճախ կարող է ամրագրվել տպագիր և առցանց բառարաններում: Դրա վառ օրինակ կարելի է համարել

անվանական կրճատմամբ ստեղծված FAQ (frequently asked questions) հապավումը, որը որպես համացանցային նոր գիտաբառ արդեն ընդգրկված է բացատրական բառարաններում:

Համացանցային հաղորդակցության մեջ լայն տարածում են ստացել մեղմասական

հապավումները, որոնք հնարավորություն են տալիս այդ դաշտում, հատկապես առցանց

կայքերում, խուսափելու գրեհկարանությունների կիրառությունից: Սակայն առանձնակի ուշադրության են արժանի այն դեպքերը, երբ այդպիսի հապավումների հնարավոր բազմիմաստային իրացումները խոսքում

հաճախ մեծ դժվարություններ են ծնում տվյալ հապավումը համապատասխանաբար ընկալելու և վերծանելու հարցում: Այսպես, օրինակ՝ *WTF (what the fuck)* մեղմասությունը, որը կարելի է մեկնաբանել նաև որպես *what the fun*, դժվար ընկալվող և վերծանվող

այդպիսի հապավումներից է: Իսկ երբ համացանցային հաղորդակցության տարբեր նմուշներում

բացահայտվում են նաև այնպիսի դեպքեր, որտեղ հապավման *W* սկզբնատառը, բացի *What* հարցական դերանունից կարող է կիրառվել նաև *why, who, when*

where և անգամ *whatever* դերանունների փոխարեն, ապա այդ պարագայում ընկալման ու վերծանման գործընթացն ավելի է խճճվում: Այսպես՝ *Bro drop this when I was sleep wtf.*

Բերված օրինակը, համացանցային տարածամանակյա հաղորդակցության նմուշ է, որտեղ օգտատերը, կիրառելով *wtf* հապավումը, մեկնաբանություն է տալիս աֆրո-ամերիկյան երգչի կատարմանը: Սակայն քանի որ այստեղ *wtf* հապավման ներիմաստը պարզ չէ, նույնիսկ եթե փորձում ենք կռահել՝ օգտվելով համատեքստի և հարատեքստի ընձեռած հնարավորություններից, ապա կարելի է ենթադրել, որ հաղորդակցությունն ըստ էության չի կայացել: Կարելի է նկատել, որ

այստեղ շրջանցվում է նաև ժամանակների համաձայնեցման կանոնը, որն ընդհանուր առմամբ պարտադիր պահանջ է անգլերենում, և այս փաստը թույլ է տալիս

ենթադրություն անել տվյալ օգտատիրոջ ընդգծված անփութության կամ կրթական ցածր մակարդակի մասին:

Մեղմասական հապավման կիրառությունները բնութագրական են ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարածամանակյա հաղորդակցական տարատեսակների համար: Մեկ այլ

մեղմասական հապավման օրինակ է *pos* միավորը: Այսպես՝

Untalented pos that needs his throat slit. Post Malone could've gotten ANYONE else on it. But settled for that fag....

Ակնհայտ է, որ բերված նմուշում օգտատերը իր բացասական վերաբերմունքն է

արտահայտում *Post Malone* կատարողի մասին՝ կիրառելով *pos (piece of shit)* հապավումը:

Հասկանալի է, որ մեկ ասույթում առկա են մեղմասական երբեքանգներ պարունակող *pos*

հապավումը և *fag* համառոտագրությունը, ընդ որում վերջինը որոշակի բազմիմաստություն ունի. մի կողմից կարող է կիրառվել *սևուշադիր, գայրացնող սև* իմաստով, մյուս կողմից՝ *համասեռասուղ* նշանակությամբ և արտահայտել խոսողի վիրավորական վերաբերմունքը: Ոչ պակաս

հետաքրքրական են նույն *fag* միավորի անցումները համառոտագրությունների կիրառական դաշտից դեպի հապավումներ, ինչպես, օրինակ, *FAG* կիրառության դեպքում՝ *Freaky Alien Genotype (այլնորոշակայինի տարօրինակ ժառանգ)* իմաստով:

Մեղմասական հապավումները կարող են նաև ձևաբանորեն խտացնել տեքստը, որն, իհարկե ավելի է դժվարացնում ասույթի արտահայտած իմաստի ընկալումն ու վերծանումը,

ինչպես օրինակ *JFGI (just fucking google it)* ասույթում: Եվ իրոք, դիտարկումները ցույց են տալիս, որ այս կարգի խտացումներն էլ կարող են ասույթի իմաստի ընկալման համար որոշակի խոչընդոտներ ստեղծել, հատկապես եթե խտացման արդյունքում ձևավորված հապավումը

այնքան էլ լայն կիրառություն չունի: Օրինակ, *NOYB (none of your business)* հապավված միավորը, որտեղ կրճատվել են ժխտական և ստացական դերանունների, կապի և գոյականի

վերջավորությունները, ձևաբանորեն սեղմելով տեքստը և ժամանակային ու տարածական տնտեսում իրականացնելով հանդերձ, այնուամենայնիվ ընկալման ու մեկնաբանման ակնհայտ դժվարություններ է ստեղծում: Այդպիսի օրինակ է նաև *I had to listen to this song 20 times in a roll nbs* Youtube սոցիալական կայքից վերցված ասույթը: Այստեղ *nbs* հապավման ներիմաստը պարզ չէ, քանի որ ըստ բառարանային քննության արդյունքների՝ այն կարող է երկու իրացում ունենալ՝ *no bull shit* կամ *nigger bull shit*: Բնականաբար, դժվար է հստակ պատկերացնել, արդյոք օգտատերը կրճատել է *no bull shit* ասույթի *no* ժխտական դերանունը, թե *nigger bull shit* ասույթի *nigger* գոյականը:

Տեղեկատվության հաղորդման իրենց բուն գործառնության գառ՝ հապավումները կարող են հաճախ հանդես գալ նաև որպես դիսկուրսային նշույթներ, որոնք ոչ միայն կարևոր դեր են խաղում դիսկուրսի կառուցվածքային կապակցվածությունն ու սահունությունն ապահովելու գործում, այլև լրացուցիչ վերաբերմունքային երանգներ են ներմուծում ասույթ: Հապավումների այդպիսի կիրառության վառ օրինակ է *tbh (to be honest)* միավորը: Այսպես՝ *tbh* հապավման կիրառությունը *This song deep as hell tbh....* տարածամանակյա հաղորդակցական ասույթում ակնհայտորեն միտված է դիսկուրսային նշույթի գործառնության իրացմանը և, իհարկե, վկայում է օգտատիրոջ՝ տեղեկատվությունը անկեղծ ու շիտակ ներկայացնելու մտադրության մասին:

Դիտարկումները ցույց են տալիս, որ հապավումները համացանցային հաղորդակցության մեջ չեն սահմանափակվում բառերի կամ արտահայտությունների սկզբնատառային կրճատման սկզբունքով: Քիչ չեն այն դեպքերը, հատկապես գրույցներում, երբ օգտատերերը հանկվածություն են դրսևորում կրճատելու ամբողջական նախադասություններ, և երբ հաղորդակցվողները

հիմնականում որոշակի պատկերացում ունեն այդ

հապավումների մասին, որևէ դժվարություն չի ծագում դրանց ընկալման ու հասկացման հարցում: Մակայն նկատելի է, որ ամբողջական

նախադասությունների կրճատման ստեղծված հապավումները երկարակյաց չեն: Դրանց զգալի մասը ժամանակի ընթացքում դուրս է մղվում լեզվից, և ի հայտ են գալիս նորերը:

Վերը արդեն նշեցինք, որ հաշվի առնելով համացանցային հապավումների

բազմիմաստության իրողությունը՝ հաղորդակցությունը հաշող իրականացնելու համար հարկ է փորձել ըմբռնել կիրառված հապավումների ներիմաստը՝ հաշվի առնելով համատեքստային և

հարատեքստային ցուցիչների ընձեռած հնարավորությունները: Ակնհայտ է, օրինակ, որ *tc*

հապավումը կարող է տարբեր կերպ մեկնաբանվել (*take care կամ too cool*)՝ կախված

հաղորդակցական իրադրությունից: Ինչպես տեսանելի է ստորև բերվող համատեքստում, *tc-ն*

փոխարինում է հաղորդակցության ավարտ նշող *take care* միավորին, այսինքն՝ հրաժեշտի

արտահայտություն է.

iceheart : great 


tc maniac

Սույն համաժամանակյա ասույթում հաղորդակցվողները քննարկում են Հիչքոքի

նկարահանած «Խելագարը» գեղարվեստական ֆիլմը: Օգտատերը իր դրական վերաբերմունքն է արտահայտում ֆիլմի վերաբերյալ՝ գործածելով հապավման և հուզանշանի համադրություն:

Մակայն եթե ասույթում չլիներ *great* ածականը, այն կարող էր թյուրիմացության պատճառ

դառնալ, քանի որ *cheers* իմաստով գործածված

 հուզանշանն էլ իր հերթին բազմիմաստ է:

Այս ասույթում առկա է հավանություն արտահայտելու ներիմաստը, սակայն ինչպես արդեն նշել ենք, այն կարող է արտահայտել նաև *շնորհակալության* կամ *ցոնտալության* ներիմաստները:

Մեկ այլ օրինակ ի ցույց է դնում համացանցային համաժամանակյա հաղորդակցության լեզվի առաջ քաշած դժվարությունները այն օգտատերերի համար, որոնք առցանց տիրույթում դեռևս հմուտ հաղորդակցվողներ չեն.

ILY

Bbl

Օգտատերը մեկ ասույթի մեջ կիրառում է երկու հապավում: Առաջինը էլեկտրոնային

գրույցներում հիմնականում ունի *I love you* ներիմաստը, սակայն մյուս՝ *Bbl* հապավման *be back later* իմաստի վերծանմամբ հասկանում ենք, որ այս ասույթում վերջինս արտահայտում է *I am leaving you* իմաստը: Այստեղից հետևում է, որ մինչև չատ սենյակներում հաղորդակցություն

սկսելը օգտատերերը արդեն պետք է որոշակի գիտելիքներ ունենան:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հապավումների ի հայտ գալը կամ դուրս մղվելը, նաև այս կամ այն հաճախադիպությամբ գործածությունը համացանցային հաղորդակցության մեջ մեծ չափով կախված են օգտատերերի նախասիրություններից և ձևավորված հապավումների

հետագա զարգացման փուլերից: Համաժամանակյա

դիսկուրսից քաղված փաստական նյութի վերլուծությունը կարող է բացահայտել հաղորդակցվողների համացանցային գրագիտության մակարդակը, նրանց՝ համացանցային նորաբանություններին տեղյակ լինելու փաստը: Նման բացահայտում հնարավոր է, օրինակ՝ *hi we kimmmy* ասույթում կիրառված *wc (wrong conversation // web camera)* հապավման քննությամբ: Սույն ասույթը, իր բազմիմաստության շնորհիվ, կարող է

թյուրըմբռնման առիթ ստեղծել, ուստի հաղորդակցվողները պետք է հաշվի առնեն ավելի լայն

հարատեքստը, որպեսզի ընկալելի լինի, թե ինչ է ցանկանում ասել գրուցակիցը: Բերված ասույթում օգտատերը չի կիրառել որևիցե կետադրական նշան, որը, իր հերթին դժվարընկալելի է դարձնում այն. արդյոք ասույթը հարցակա՞ն է, թե՞ հաստատական: Սակայն այստեղ օգնության է հասնում հարատեքստը, և պարզ է դառնում, որ օգտատերը ցանկանում է ճշտել, թե արդյոք

Քիմին տեսախցիկ ունի՞:

Համացանցային դիսկուրսում հապավումների առկայությունը երբեմն կարող է թյուրըմբռնման պատճառ դառնալ, եթե օգտատերը նորեկ է: Այսպես՝

sheetmetalmán: *ok, kimmmy, give you the benefit of the doubt, where are you from? 3:58:am*

(**kimmmy**): *@sheetmetalmán, PA 3:58:am*

Բերված նմուշում առաջին օգտատերը ցանկանում է իմանալ գրուցակցի բնակության վայրը: Վերջինս պատասխանում է նրան *PA* հապավման միջոցով, և քանի որ այս հապավումը առավել հայտնի է *տղս* կամ *ծնողներին խորհուրդ է տրվում* իմաստներով, ապա Փենսիլվանիա նահանգը նշելու մտադրությամբ օգտատիրոջ կիրառած այս հապավումը թյուրիմացության առիթ է ստեղծում:

Ստորև բերվող ասույթի երկրորդ մասում երրորդ օգտատերը վիրավորում է Քիմի անունով օգտատիրոջը՝ նրան անվանելով ներցեղային խաչասերման արդյունքում ի հայտ եկած արարած Փենսիլվանիայից:

Poe: *didn't think PA had inbreds*

(**kimmmy**): *@juzzy29, WGO 5:00:am*

Մեկ այլ օրինակում տեսնում ենք, որ Քիմին կիրառել է *WGO (what's going on)* հապավումը՝ առանց հարցական կետադրական նշանի: Պետք է նշել որ առցանց բառարաններում սույն

հապավման բացատրության մեջ հարցական նշանը նույնպես բացակայում է: Ուստի կարող ենք փաստել, որ համացանցային հապավումների դեպքում հարցական նշանի բացակայությունը չի հակասում կետադրական նշանների՝ համացանցային հաղորդակցության մեջ ընդունված կարգավորումների սկզբունքին:

hello jazzy how r u 4:47:am

I'm good hru 4:47:am

Բերված նմուշում կարելի է նկատել, որ սույն համաժամանակյա հաղորդակցական ասույթում օգտատերերը *how are you* հարցական արտահայտությունը գործածել են մի դեպքում որպես համառոտագրություն, մյուս դեպքում՝ որպես հապավում: Առաջին դեպքում բայի սկզբնամասի և վերջնամասի, ինչպես նաև *you* դերանվան սկզբնամասի կրճատման արդյունքում ստացված համառոտագրությունները ըստ էության համանուն են *r* և *u* տառանվանումներին: Կարելի է նկատել, որ երկու օգտատերերն էլ խուսափել են կե-

տադրական նշաններից:

Մեկ այլ օրինակում տեսնում ենք, որ համաժամանակյա հաղորդակցության մեջ

հապավումների կիրառումը ոչ միայն տվյալ խմբային պատկանելության դրսևորում է, այլև

հետամուտ է ժամանակ խնայելու: Այսպես՝ **x0rawr0x:** *@(Me Me Pick Me), nm 5:07:am*

Այստեղ առաջին օգտատերը, կիրառելով սկզբնամասի կրճատում, [*u (you)*], ցանկանում է

իմանալ *Me Me Pick Me*-ի որպիսությունը, ընդ որում ասույթում գեղջված է լիիամաստ բայը: Հասկանալի է, որ օգտատերերից մեծ հմտություն է պահանջվում, որպեսզի հասկանան

համացանցային հաղորդակցության ընթացքում կիրառված այսօրինակ հապավումների կամ

համառոտագրությունների իմաստը: Տվյալ օրինակում երկրորդ օգտատերը գործածել է *nm (not much/nothing much)* հապավումը, որը ուրիշ խոսքային իրադրություններում կարող է նշանակել բոլորովին այլ բան:

Հաջորդ ասույթում, որը քաղված է տարածամասնակյա հաղորդակցության նմուշից, ի հայտ է գալիս համառոտագրությունների բազմակի կիրառում:

Don't worry when kids say u r ugly, it's not only u... including their mom, Give them what they want, n u will.be the most beautiful girl in their world

Ինչպես տեսնում ենք, օգտատերը կրճատել է դերանվան և բայ հանգույցի սկզբնամասերը,

որպեսզի խնայի ստեղծաշարը և ժամանակը: Այս նմուշում այն գործածվել է որպես բառավերջի համառոտագրություն, որը փոխարինում է *now* ժամանակի մակբային:

Եզրակացություն. Այսպիսով հապավումներն ու համառոտագրությունները, որոնց հիմնական նպատակն է խնայել ժամանակը և ցույց տալ օգտատիրոջ՝ որևիցե խմբին պատկանելը, լեզվական տնտեսման արդյունավետ միջոցներից են և ըստ էության համացանցային դիսկուրսի անբաժան մաս: Որոշ դեպքերում դրանք կիրառվում են նաև բանավոր խոսքի նրբերանգները շեշտադրելու նպատակով:

Կարելի է նաև նկատել, որ հարատեքստային նկարագրական մեթոդի կիրառումը

համատեքստի և հարատեքստի գիտելիքային հենքի հաշվառումով հնարավորություն է տալիս

կատարելու խոսքի վերլուծություն և հետազոտելու երկխոսական միավորների նմուշներ տարածամասնակյա և համաժամանակյա համացանցային հաղորդակցական իրադրություններում, արժևորելու տեսական շատ դրույթեր և դրանց իրացումը համացանցային հաղորդակցական գործընթացներում, բարձացնելու դրանց արդյունավետությունը և օգնելու համացանցում հաղորդակցվող ոչ հմուտ օգտատերերին ճիշտ ընկալելու գրուցակիցներին և նպատակային

դարձնելու համացանցային քաղաքավարության նորմերի կիրառումը:

Հուսով ենք, որ այս ուսումնասիրության արդյունքները կարող են օգտակար լինել համացանցային հաղորդակցության ինչպես տեսական, այնպես էլ գործնական արժևորումներում և կիրառություն գտնել անզլերենի առցանց դասավանդման գործնական դասընթացներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Baron N. S. Alphabet to Email: How Written English Evolved and Where it's Heading. New York: Routledge, 2000.
2. Baron N. Discourse Structures in Instant Messaging: The Case of Utterance Breaks, 2010, <<http://www.languageatinternet.org/articles/2010/2651>>
3. Crystal D. Language and the Internet. Cambridge, Cambridge University Press, 2004.
4. Farina S. Rhetoric, Innovation, Technology: Case Studies of Technical Communication in Technology Transfers. Cambridge (MA), MIT Press, 1992.
5. Galimberti C., Riva G. Computer-Mediated Communication: Identity and Social Interaction in an Electronic Environment // Genetic, Social and General Psychology Monographs. N 128, 1998, pp.434-464. <https://www.researchgate.net/publication/279697449_Computermediated_communication_Identity_and_social_interaction_in_an_electronic_environment>
6. Herring S. C. Functions of the Nonverbal in CMC: Emoticons and Illocutionary Force. <2010. <http://ella.slis.indiana.edu/~herring/emoticons.pdf>>
7. Jakobson R. The Framework of Language // Michigan Studies in the Humanities. 1980,
8. The British Cyclopaedia of the Arts, Sciences, History, Geography, Literature, Natural History, and Biography, Wm. S. Orr and Company, 1838.
9. Thurlow C. & Brown, A. Generation txt? The Sociolinguistics of Young People's Text-Messaging // Discourse Analysis Online. Vol. 1, Department of Communication, University of Washington, Box 353740, Seattle, 2003, pp.1-27.
10. Баринаова С. Типология англоязычных сокращений используемых в сети интернет. Воронеж, 2008, ВГУ, Автореф. дисс. канд. филол. наук.
11. Хуснулина Ю. А. Структурно-семантическая и функциональная специфика аббревиатур компьютерного дискурса. Москва, 2012, Московский городской педагогический университет.
12. Աղայան Է. Ժամանակակից հայերենի հապավական բաղադրությունները // Լրագիր, Եր., № 6, 1979, էջ 13-28:
13. Աղաջանյան Ա. Հապավումների և համառոտագրությունների լեզվաբանական առանձնահատկություններն անգլալեզու առցանց հաղորդագրություններում: Թեկնած. ատենախոսության սեղմագիր, Եր., 2013:
14. Մարգարյան Ալ., Հայերենի հապավումները և նրանց առանձնահատկությունները, Եր., Ա. հ., 1977:

REFERENCES

1. Baron N. S. Alphabet to Email: How Written English Evolved and Where it's Heading. New York: Routledge, 2000.
2. Baron N. Discourse Structures in Instant Messaging: The Case of Utterance Breaks, 2010, <<http://www.languageatinternet.org/articles/2010/2651>>
3. Crystal D. Language and the Internet. Cambridge, Cambridge University Press, 2004.
4. Farina S. Rhetoric, Innovation, Technology: Case Studies of Technical Communication in Technology Transfers. Cambridge (MA), MIT Press, 1992.
5. Galimberti C., Riva G. Computer-Mediated Communication: Identity and Social Interaction in an Electronic Environment // Genetic, Social and General Psychology Monographs. N 128, 1998, pp.434-464. <https://www.researchgate.net/publication/279697449_Computermediated_communication_Identity_and_social_interaction_in_an_electronic_environment>
6. Herring S. C. Functions of the Nonverbal in CMC: Emoticons and Illocutionary Force. <2010. <http://ella.slis.indiana.edu/~herring/emoticons.pdf>>
7. Jakobson R. The Framework of Language // Michigan Studies in the Humanities. 1980,
8. The British Cyclopaedia of the Arts, Sciences, History, Geography, Literature, Natural History, and Biography, Wm. S. Orr and Company, 1838.
9. Thurlow C. & Brown, A. Generation txt? The Sociolinguistics of Young People's Text-Messaging // Discourse Analysis Online. Vol. 1, Department of Communication, University of Washington, Box 353740, Seattle, 2003, pp.1-27.
10. Barinova S. The Typology of English Contractions Used on the Internet. Voronezh, 2008, VSU, Synopsis of PH.D. dissertation.
11. Khusnulina U.A. The Structural-Semantic and Functional Features of Abbreviations in Computer Discourse. Moscow, 2012, Moscow City Pedagogical University.
12. Aghayan E. Abbreviative Compounds of Contemporary Armenian // Bulletin, Yerevan, № 6, 1979, pp. 13-28.
13. Aghajanyan A. The Linguostylistic Peculiarities of Contractions and Abbreviations in English On-Line Messagees. Yerevan, 2013, Synopsis of PH.D. dissertation.
14. Margaryan Al. Armenian Abbreviations and Their Peculiarities. Yerevan 1977, Vol 1.

On the Functional Features of Acronyms and Abbreviations in On-Line Discourse

S. K. Gasparyan, N. H. Madoyan

It has been established that such important factors as social, cultural, gender, etc. factors have a great impact on the creation of virtual reality. Recent studies have shown that the choice of linguistic and multilingual means depends, to a considerable extent, on the communicative strategies and mechanisms adopted by the language users. In the present article, the authors focus is on the functionality of different contractions and acronyms, which are widely used in online and offline communication, and are closely related to the all-important question of virtual time and space saving. The application of the cotextual descriptive method with a particular attention to the field of cotext and context knowledge in speech analysis allows the authors to emphasize the decisive role of the quantitative և qualitative uses of abbreviations in identifying the users' social and cultural characteristics.

Keywords: online communication, contractions and abbreviations, social and cultural factors, context, cotext, saving time and space.